ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԵՐԵԶԱ ԱՄՐՅԱՆ

ՔՐԴԵՐԵՆ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 811.222.5(07)
ԳՄԴ 81.2Քրդերեն գ7
Ա 536

Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Ամրյան Թ.
Ա 536 Քրդերեն: Ուսումնամեթոդական ձեռնարկ/Թերեզա Ամրյան, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, իրանագիտության ամբիոն: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 48 էջ:

Ձեռնարկում համապարփակ կերպով ներկայացված է ԵՊՀ իրանագիտության ամբիոնի բակալավրիատի երրորդ կուրսում՝ 6-րդ կիսամյակում դասավանդվող «Քրդերեն» առարկայի կառուցվածքը: Դասընթացը ուսանողներին հնարավորություն է տալիս ուսումնասիրել արևմտահիրանական լեզուներից մեկի՝ քրդերենի բարբառները, խոսվածքները և քերականական համակարգը: Դասընթացի շրջանակներում հետազոտվում է քրդերենի քերականական համակարգը՝ այն համեմատության մեջ դնելով արդեն իսկ ուսանողին ծանոթ այլ իրանական լեզուների և բարբառների քերականական և լեզվաբանական իրողությունների հետ: Ընթերցվում, թարգմանվում են տարբեր քրդական բարբառներով ու խոսվածքներով տեքստեր: Դասընթացը հիմնված է գործնական, անհատական և ինքնուրույն աշխատանքի վրա:

Ձեռնարկը նախատեսված է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև իրանական համեմատական լեզվաբանությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 811.222.5(07)
ԳՄԴ 81.2Քրդերեն գ7

ISBN 978-5-8084-2066-3

© ԵՊՀ հրատ., 2016
© Ամրյան Թ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի նկարագիրը 5
Դասընթացի նպատակը 6
Դասընթացի խնդիրները 7
Կրթական արդյունքները 7
Դասավանդման և ուսումնառության մեթոդները 8
Դասընթացի ստուգման պահանջները 8
Առարկայի թեմատիկ պլանը 10
Դասընթացի ուսումնական քարտեզը՝ ըստ ուսումնառության շաբաթների
1-ին շաբաթ 12
2-րդ շաբաթ 12
3-րդ շաբաթ 13
4-րդ շաբաթ 13
5-րդ շաբաթ 14
6-րդ շաբաթ 15
7-րդ շաբաթ 15
8-րդ շաբաթ 16
9-րդ շաբաթ 16
10-րդ շաբաթ 17
11-րդ շաբաթ 18
12-րդ շաբաթ 18
13-րդ շաբաթ 19
14-րդ շաբաթ 19
15-րդ շաբաթ 20
16-րդ շաբաթ 20
Դասընթացի բովանդակությունը՝ ըստ թեմաների
Թեմա 1 22
Թեմա 2 22
Թեմա 3 23
Թեմա 4 24
Թեմա 5 25

Թեմա 6 25
Թեմա 7 26
Թեմա 8 27
Թեմա 9 28
Թեմա 10 28
Թեմա 11 29
Թեմա 12 30
Թեմա 13 30
Թեմա 14 31
Թեմա 15 31
Թեմա 16 32
Թեմա 17 33
Թեմա 18 33
Թեմա 19 34
Թեմա 20 35
Թեմա 21 35
Թեմա 22 36
Թեմա 23 36
Թեմա 24 37
Թեմա 25 38
Թեմա 26 39
Թեմա 27 39
Թեմա 28 40
Թեմա 29 41
Թեմա 30 42
Թեմա 31 42
Թեմա 32 43
Գրականության ցանկ 44

Դասընթացի նկարագիրը

Քրդերենը դասավանդվում է ԵՊՀ իրանագիտության ամբիոնի բակալավրիատի 6-րդ կիսամյակում: Լեզվի դասավանդմանը տրամադրվում է շաբաթական 4 ժամ (կիսամյակի ընթացքում 64 ժամ): Առարկան եզրափակիչ գնահատումով դասընթաց է:

Քրդերենը պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան ենթաճյուղին: Քրդական բարբառները բաժանվում են 3 խմբի՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային: Ընդունված է հյուսիսային բարբառախումբը կոչել կուրմանջի, հարավայինն ու կենտրոնականը միասին վերցրած՝ սորանի: «Քրդերեն» առարկայի դասավանդումն իրանագիտության ամբիոնի առարկայական ծրագրերում ներառվել է տարիներ առաջ՝ հաշվի առնելով իրանական համեմատական լեզվաբանության մեջ տարբեր իրանական լեզուների, ինչպես նաև քրդական բարբառների ու խոսվածքների ուսումնասիրության կարևորությունը: Վերջին շրջանում այս բնագավառում իրականացվող աշխատանքները, իրանական լեզվաբանության դաշտի բարբառային հետազոտությունները հավաստում են իրանական տարբեր լեզուների դասավանդման կարևորությունը: Քրդերենի ուսումնասիրությունը տրամադրում է համեմատական նյութ, որը կարող է համաժամանակյա կտրվածքով հարստացնել իրանական լեզվաբանությանը նվիրված ցանկացած աշխատանք և հետազոտություն: Դասընթացն ուսանողի համար այն ատաղձի մի մասն է դառնում, որի հիմքի վրա հետագայում նա մասնագիտանալու է իրանական լեզվաբանության մեջ:

Իրանագիտության ամբիոնում առարկայի դասավանդման մեթոդական մասը մշակվել է հեղինակի կողմից և հիմնված է լեզվի քերականական կառուցվածքի համեմատական ներկայացման, քրդերենով տրվող տեքստային նյութի ու մշակված վարժությունների վրա:

«Քրդերեն» առարկայի դասավանդման ընթացքում օգտագործվում է իրանագիտական ու մասնավորապես քրդագիտական բազմալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, քրդերեն) գրականություն:

Դասընթացի նպատակը

Տվյալ դասընթացը հյուսիսարևմտյան իրանական լեզուներից մեկի՝ քրդերենի բարբառների ու խոսվածքների համեմատական ուսումնասիրությունն է՝ ըստ համապատասխան քերականական նյութի և բնագիր տեքստերի: Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին ներկայացնել քրդերենի ուսումնասիրման պատմությունը, քրդերենի մասին հիշատակությունները, քրդերենով մեզ հասած առաջին գրավոր աղբյուրներն ու հուշարձանները, պատմության ընթացքում քրդերենի համար կիրառված գրային համակարգերը:
2. Ուսանողներին իրազեկ դարձնել քրդերենի ձևավորման պատմության, զարգացման փուլերի, տարածման աշխարհագրական արեալի, քրդերենի բարբառային բաժանման և դրա սկզբունքների մասին:
3. Տեսականորեն ուսանողներին ցույց տալ քրդական բարբառների ու խոսվածքների միջև գոյություն ունեցող տարբերություններն ու ընդհանրությունները, հնչյունական, ձևաբանական և բառապաշարային առանձնահատկությունները:
4. Ուսանողներին փոխանցել քրդերենի քերականության և բառային հիմնական ֆոնդի համապարփակ պատկերը՝ բարբառագիտական և քերականական նյութը ներկայացնելով քրդերենի և արդեն իսկ ուսանողին ծանոթ այլ իրանական լեզուների քերականական իրողությունների համեմատական կտրվածքով:
5. Ուսանողների մոտ ձևավորել քրդերեն տեքստեր կարդալու, ընկալելու, թարգմանելու հմտություններ:
6. Տարբեր բարբառներով ու խոսվածքներով ներկայացվող տեքստերի ուսումնասիրման միջոցով գործնական աշխատանքի ընթացքում տարբերակել քրդերենի բարբառների ու խոսվածքների հնչյունական, քերականական, բառապաշարային ընդհանրություններն ու տարբերությունները:
7. Ամրապնդել ուսանողի՝ լեզվաբանությունից ձեռք բերած ընդհանուր գիտելիքները:

Դասընթացի խնդիրները

«Քրդերեն» առարկայի ուսումնասիրության համար կարևորվում է ուսանողների կողմից լեզվական որոշակի հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Ուստի ուսումնառության ընթացքում հետամուտ ենք լինում հետևյալ խնդիրներին.

1. Քրդերենի ուսումնասիրությանը նվիրված գիտական աշխատանքների քննական դիտարկումը, դրանց լուսաբանումը ապահովում են աշխատանքի հետագա ձևավորման հենքը:
2. Քերականական, բարբառագիտական, լեզվաբանական քննության համար տրամադրված հետազոտական նյութը նպաստում է իմաստաբանական և ստուգաբանական եզրահանգումներ անելուն:
3. Լսարանում կատարվող քննարկումների ու վերլուծությունների արդյունքում ձևավորվում է ուսանողի կողմից ինքնուրույն համեմատություններ և ընդհանրացումներ անելու, վերլուծելու և եզրակացությունների գալու հմտությունը՝ ըստ որի ուսումնասիրվող նյութը դառնում է առավել պատճառաբանված ու տրամաբանական:
4. Վերլուծությունների արդյունքում քննարկումներ են ծավալվում ուսանողների, ինչպես նաև ուսանողների ու դասախոսի միջև, ինչը ենթադրում է միմյանց լսելու, կարծիքներ փոխանակելու հնարավորություն ու այդ հմտությունների կատարելագործում:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

- ✓ Պատկերացում կազմի իրանական լեզուների համակարգում քրդերենի զբաղեցրած տեղի մասին:
- ✓ Կարողանա տարբերակել լեզվի բարբառները՝ ըստ տարածման արեալի և լեզվական առանձնահատկությունների:
- ✓ Ի վիճակի լինի կարդալ, ձևաբանական վերլուծության ենթարկել և բառարանի օգնությամբ թարգմանել քրդերենով ցանկացած տեքստ:

- ✓ Կարողանա կիրառել քրդերենի իր գիտելիքները համեմատական և պատմահամեմատական լեզվաբանության մեջ:
- ✓ Կարողանա ստացած գիտելիքների հիման վրա ավելի խորացնել քրդերենի իր իմացությունը, հարստացնել բառապաշարը և ազատ տիրապետել լեզվին:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները

Քրդերենի դասավանդման մեջ առաջնային խնդիր է համարվում քրդերենի բարբառների քերականական ու բառապաշարային նյութի ընկալումը, ինչպես նաև իրանական այլ լեզուների ու բարբառների քերականական առանձնահատկությունների հետ համեմատությունը: Դասընթացը կառուցված է հետևյալ մեթոդով՝

- ✓ Լեզվաբանական և քերականական նյութի ներկայացում:
- ✓ Տրված նյութի վերլուծություն և քննարկում:
- ✓ Նյութի հետ առնչվող տեքստերի ընթերցում և թարգմանություն:
- ✓ Նյութին համապատասխան մշակված վարժությունների կատարում:
- ✓ Նյութի անհատական ներկայացումներ:
- ✓ Խմբային քննարկումներ:

Լսարանին տրամադրվում է ուսումնական նյութը, դրա հետ կապված գիտական գրականությունը, տեքստերը և հեղինակի կողմից մշակված վարժությունները: Ուսանողները կարդում, թարգմանում են տեքստերը, կատարում վարժությունները. անցկացվում են նյութի տեսական հատվածի խմբային քննարկումներ, անհատական աշխատանքներ:

Դասընթացի ստուգման պահանջները

Երկու միջանկյալ քննությունների արդյունքները	40 %
Ուսանողի ներկայությունը դասերին	10 %
Եզրափակիչ քննությունը	50 %
Ընդամենը	100 %

Ուսանողի գիտելիքի ստուգումն ու գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով գործնական պարապմունքներին նրա մասնակցությունը, միջանկյալ և եզրափակիչ քննությունների արդյունքները: Գործնական պարապմունքներից չբացակայելու պարագայում ուսանողին տրվում է առավելագույնը 2 միավոր: Նախատեսված 2 միջանկյալ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուր հարցը գնահատվում է 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Այս դեպքում հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավորներով: Միավորների քայլը 0,5 է: Արդյունքում ուսանողը վաստակում է 3 կրեդիտ:

Լսարանային ակտիվ աշխատանքի շարունակական բնույթը, համակողմանի և բազմապիսի քննարկումները նպաստում են ուսանողների գիտակազմակերպչական հմտությունների կազմավորմանը:

Աշխատանքային գործընթացը ուսանողի մոտ ձևավորում է սեփական բաղթողումներն ու թերացումները գիտակցելու և դրանք շտկելու կարողություն, ինչն էլ առավել բարձրացնում է աշխատանքի արդյունավետությունը և նպաստում ստուգման ընթացքին:

Առարկայի թեմատիկ պլանը

N	Թեմա	Ժամաքանակ	Գործնական պարապմունք
1	Համառոտ ակնարկ քրդերենի ուսումնասիրության պատմությունից	2	2
2	Քրդերենի բարբառային բաժանումը և լեզվի համար կիրառված գրային համակարգերը	2	2
3	Քրդերենի հնչյունական համակարգն ու այբուբենը	2	2
4	Անձնական դերանուններ	2	2
5	Թվական անուն	2	2
6	Քրդերենի բայ հանգույցը, օժանդակ բայը, դիմային վերջավորությունները	2	2
7	Գոյականի սեռը	2	2
8	Իզաֆեթը քրդերենում	2	2
9	Գոյականի որոշյալի և անորոշի առման քերականական կարգը	2	2
10	Բայը քրդերենում	2	2
11	Անցողական և անանցողական բայեր	2	2
12	Բայի անցյալի հիմքը	2	2
13	Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը	2	2
14	Ածական անուն	2	2
15	Անդրադարձ-սաստկական, որոշյալ և անորոշ դերանունները քրդերենում	2	2
16	Պատճառական բայեր	2	2
17	Սահմանական եղանակի անցյալ շարունակական ժամանակաձևը	2	2

18	Հարցական-հարաբերական դերանուններ	2	2
19	Քրդերենի հոլովական համակարգը	2	2
20	Բայի ներկայի հիմքը քրդերենում	2	2
21	Սահմանական եղանակի ներկա շարունակական ժամանակաձևը	2	2
22	Գոյականի թվի քերականական կարգը	2	2
23	Քրդերենի փոխադարձ, ժխտական դերանունները	2	2
24	Նախդիրները և հետդիրները քրդերենում	2	2
25	Սահմանական եղանակի ապառնի ժամանակը	2	2
26	Սահմանական եղանակի վաղակատար ժամանակը	2	2
27	Սահմանական եղանակի անցյալ վաղակատար ժամանակը	2	2
28	Պայմանական-ստորադասական եղանակի ներկա-ապառնի (առրիստ) ժամանակաձևը	2	2
29	Մակբայ	2	2
30	Պայմանական-ստորադասական եղանակի անցյալ ենթադրական ժամանակաձևը	2	2
31	Հրամայական եղանակ	2	2
32	Բայասեռի կարգը քրդերենում	2	2

Դասընթացի ուսումնական քարտեզը՝
ըստ ուսումնառության շաբաթների

1-ին շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Դասընթացի ընդհանուր դրույթները, թեմայի ուսումնասիրության պատմության համառոտ ակնարկ. քրդերենի բարբառային բաժանման և լեզվի պատմության ընթացքում քրդերենի համար կիրառված գրային համակարգերը և դրանց քննարկումը: Թեմային առնչվող գիտական գրականության քննություն, առարկայի սահմանների ճշգրտում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք. ներածական ներկայացում:

Ուսումնառության ձևը

Դասընթացի ծրագրի, նպատակների ու խնդիրների ներկայացում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ

Բանավոր հարցումներ, հարցադրումներ և քննարկումներ:

2-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Քրդերենի տեղը արևմտահիրանական լեզուների շարքում, քրդերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունների, անձնական դերանունների և դրանց կիրառության համառոտ ներկայացում: Առաջնային նշանակություն ունեցող գիտական գրականության հանձնարարում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք, քննարկումներ:

Ուսումնառության եղանակը

Առարկան ուսումնասիրելու համար անհրաժեշտ գրականության ցանկի ներկայացում և որոշակի գրքերի ու հոդվածների տրամադրում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ

Հարցուպատասխան, ընդհանուր քննարկումներ:

3-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Թվականը քրդերենում. քանակական, դասական, կոտորակային թվականներ: Ժամանակ ցույց տվող արտահայտությունների, շաբաթվա օրերի անվանումների, ամսանունների ներկայացում: Քրդերենի օժանդակ բայի, դիմային վերջավորությունների խմբերի ու տեսակների ներկայացում, համեմատական վերլուծություն, քերականական դիտարկումներ: Համապատասխան գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք:

Ուսումնառության եղանակը

Նյութի քննարկում և վերլուծություն: Տեքստերի ընթերցում, թարգմանություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ

Հարցադրումներ, հարցուպատասխան:

4-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Քրդերենում գոյականի արական, իգական և չեզոք սեռերը: Գոյականի սեռի առկայության հետ կապված՝ քրդերենում իզաֆեթային կա-

ռույցի կազմության առանձնահատկությունների քննարկում: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը
Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը
Նյութի քննարկում, վերլուծություն, տեքստի ընթերցում, թարգմանություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ
Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան, ճեպազրույց:

5-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն
Քրդերենում գոյականի որոշյալ և անորոշ առումները, դրանց կազմության և կիրառության առանձնահատկությունները: Բայը քրդերենում. անորոշ դերբայի կազմությունը, տեսակները, պարզ, ածանցավոր և բաղադրյալ բայերը: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը
Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը
Թեմայի քննարկում, տեքստերի ընթերցում, թարգմանություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ
Հարցադրումներ, հարցուպատասխան, ճեպազրույց:

6-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Անցողական և անանցողական բայերը քրդերենում, դրանց խոնարհման և կիրառման առանձնահատկությունները տարբեր ժամանակաձևերում: Բայի անցյալի հիմքը, դրա կազմությունը և կիրառությունը: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը

Նյութի քննարկում, տեքստերի ընթերցում, թարգմանություն, վարժությունների և առաջադրանքների իրականացում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ

Անհատական ներկայացումներ, հարցադրումներ, հարցուպատասխան:

7-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Քրդերենում անցյալ կատարյալի կազմությունը. այդ ժամանակաձևի կիրառության առանձնահատկությունները տարբեր քրդական բարբառներում ու խոսվածքներում: Ածականը, ածականի տեսակները, կազմությունը և կիրառությունը: Համապատասխան գրականության, տեքստերի ու վարժությունների հանձնարարում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը

Նյութերի քննարկում, տեքստերի ընթերցում, թարգմանություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ վերջնարդյունքի գնահատում

Գրավոր միջանկյալ քննություն:

8-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Անդրադարձ-սաստկական դերանուն, որոշյալ և անորոշ դերանունները և դրանց կիրառությունը քրդերենի տարբեր բարբառներում ու խոսվածքներում: Պատճառական բայերի կազմության ձևերն ու կիրառությունը: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը

Նյութի քննարկում, տեքստերի ընթերցում, վարժությունների իրականացում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ

Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան, տնային հանձնարարությունների կատարում:

9-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Քրդերենում սահմանական եղանակի անցյալ շարունակական ժամանակաձևի կազմության և կիրառության առանձնահատկությունները: Հարցական-հարաբերական դերանունները, դրանց կիրառությունը,

ծագումնաբանական առանձնահատկությունները: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը
Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը
Նյութի քննարկում, տեքստերի ընթերցում, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ
Հարցուպատասխան, ճեպազրույց, տնային հանձնարարությունների ստուգում:

10-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն
Քրդերենի հոլովական համակարգի արտահայտումը բառերի ներքին թեքման, մասնիկավորման, ինչպես նաև նախդիրների ու հետդիրների կիրառության միջոցով: Բայի ներկայի հիմքի կազմության ձևերն ու դրանցում առկա բացառությունները: Բայի ներկայի հիմքի կիրառությունը: Համապատասխան գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը
Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը
Նյութի քննարկում, հոլովական համակարգի քննություն, տեքստերի ընթերցում, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ
Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան, քերականական դիտարկումներ:

11-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Սահմանական եղանակի ներկա շարունակական ժամանակը, դրա կազմությունն ու կիրառությունը: Գոյականի թվի քերականական կարգը քրդերենում. եզակի և հոգնակի թվերի կազմությունը, դրանց արտահայտումը և համատեքստում տարորոշելու միջոցները: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը

Նյութի քննարկում, տեքստերի ընթերցում, թարգմանություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ

Անհատական ներկայացումներ, քերականական դիտարկումներ:

12-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Փոխադարձ և ժխտական դերանունները քրդերենում. դրանց կիրառության քննարկումը և համեմատումը այլ իրանական լեզուների համապատասխան դերանունների հետ: Նախդիրների և հետդիրների ծագումնաբանական առանձնահատկությունները, գործառույթը: Թեմային համապատասխան գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը

Նյութի քննարկում, տեքստերի թարգմանություն, վերլուծություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ

Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան, ճեպազրույց:

13-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևի կազմությունն ու կիրառությունը քրդերենում: Սահմանական եղանակի վաղակատար ժամանակը. դրա կիրառման առանձնահատկությունները: Թեմային համապատասխան գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը

Նյութի քննարկում, տեքստերի թարգմանություն, վերլուծություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ

Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան:

14-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն

Սահմանական եղանակի անցյալ վաղակատար ժամանակաձևի կազմությունը և կիրառությունը: Պայմանական-ստորադասական եղանակի ներկա-ապառնի (առրիստ) ժամանակաձևը քրդերենում: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը

Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը
Նյութի քննարկում, տեքստերի թարգմանություն, վերլուծություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ ընթացիկ
Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան:

15-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն
Մակբայների ծագումնաբանական առանձնահատկությունները, դասակարգումը, տեսակները և կիրառությունը քրդերենում: Պայմանական-ստորադասական եղանակի անցյալ ենթադրական ժամանակաձևը: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը
Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը
Նյութի քննարկում, տեքստերի թարգմանություն, վերլուծություն, վարժությունների կատարում:

Գնահատման ձևը՝ վերջնարդյունքի գնահատում
Գրավոր միջանկյալ աշխատանք:

16-րդ շաբաթ

Թեմատիկ բովանդակություն
Հրամայական եղանակի կազմությունն ու կիրառությունը քրդերենում: Բայասեռի կարգը. ներգործական և կրավորական սեռերի կազմության ձևերը: Թեմային առնչվող գրականության, տեքստերի ու վարժությունների տրամադրում:

Դասավանդման ձևը
Գործնական աշխատանք:

Ուսումնառության ձևը
Սկզբնաղբյուրների առանձին հատվածների ընթերցում, վերլուծություն:

Գնահատման ձևը՝ ընթացիկ
Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան:

Քննաշրջանի ավարտ

Գնահատման ձևը՝ վերջնարդյունքի գնահատում
Բանավոր եզրափակիչ քննություն:

Դասընթացի բովանդակությունը՝ ըստ թեմաների

«Քրդերենի» դասընթացի ուսումնասիրությունը հիմնված է լեզվի քերականական իրողությունները ներկայացնելու, դրանք իրանական այլ լեզուների համատեքստում վերլուծելու, տեքստեր ընթերցելու, թարգմանելու և նյութին համապատասխան վարժություններ կատարելու վրա: Ուսումնասիրվում ու քննարկվում է նաև թեմային առնչվող գիտական գրականությունը:

Թեմա 1

- Համառոտ ակնարկ քրդերենի ուսումնասիրության պատմությունից:
- ✓ Քրդերենի ուսումնասիրության հակիրճ ներածական խոսք:
- ✓ Քրդերենով մեզ հասած առաջին գրավոր հուշարձանները:

Առաջարկվող գրականությունը՝

1. Ասատրյան Գ., *Քրդագիտության հիմնադրույթներ*, Իրան-Նամէ, 1996, № (2-3) 18-19, էջ 3-6:
2. Бакаев Ч. Х., *История изучения курдского языка в России и СССР*, в кн. “Очерки по истории изучения иранских языков”, Москва, 1962.
3. Руденко М. Б., *Курдская литература XVII века*, Народы Азии и Африки, № 3, Москва, 1971, сс. 93-105.
4. Руденко М. Б., *Описание курдских рукописей ленинградских собраний*, Москва, 1961.
5. Aygen G., *Kurmanji Kurdish Grammar*, Munchen, 2007.
6. Noorlander P., *Diversity in convergence: Kurdish and Aramaic variation entangled*, Kurdish Studies, Vol. 2, № 2, 2014, pp. 201-224.

Թեմա 2

- Քրդերենի բարբառային բաժանումը և լեզվի համար կիրառված գրային համակարգերը:

✓ Քրդերենի բարբառային բաժանման սկզբունքները:
✓ Քրդերենի համար կիրառված գրային համակարգերը:

Առաջարկվող գրականությունը՝

1. Ասատրյան Գ., *Քրդագիտության հիմնադրույթներ*, Իրան-Նամէ, 1996, № (2-3) 18-19, էջ 3-6:
2. Маккензи Д. Н., *Курманджи*, *курди и гурани*, Народы Азии и Африки, № 1, Москва, 1963, сс. 162-170
3. Руденко М. Б., *К вопросу о курдской литературе*, Исследования по истории культуры народов Востока, Ленинград, 1960.
4. MacKenzie D. N., *Kurdish Dialect Studies*, Vol. 1, London, 1961.
5. MacKenzie D. N., *Kurdish Dialect Studies*, Vol. 2, London, 1962.

Թեմա 3

- Քրդերենի հնչյունական համակարգն ու այբուբենը:
✓ Լեզվի հնչյունական համակարգի առանձնատկությունները:
✓ Քրդերենի հնչյունական համակարգի և այլ իրանական լեզուների հնչյունական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները:
✓ Ներկայումս աշխարհասփյուռ քրդալեզու հանրույթների կողմից կիրառվող լատինատառ այբուբենը:

Առաջարկվող գրականությունը՝

1. Հովհաննիսյան Լ., *Հայերենի իրանական փոխառությունները*, Երևան, 1990:
2. Асатрян, Г. С., *Язык заза и армянский (Предварительные заметки)*, Историко-филологический журнал АН Арм. ССР, № 1, Ереван, 1987, сс. 160-161.
3. Асатрян, Г. С., *О ранних арменизмах в курдском,* Историко-филологический журнал АН Арм. ССР, № 2 , Ереван, 1986, сс. 168-175.

4. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957
5. Курдоев К. К., *Критика ошибочных взглядов на курдский язык*, Краткие сообщения Института востоковедения АН СССР, т. XII, 1955.
6. Мамоян А. Д., *Грамматические категории существительного и основы индоевропейского праязыка в курдском*, Санкт-Петербург, 2007.
7. Миллер Б. В., *О некоторых проблемах курдской фонетики*, сб. Иранские языки, т. II, Москва-Ленинград, 1950.
8. Оранский И. М., *Введение в иранскую филологию*, Москва, 1988.
9. Соколова В. С., *Очерки по фонетике иранских языков*, Москва-Ленинград, 1953.

Թեմա 4

- Անձնական դերանուններ:
- ✓ Անձնական դերանունների ուղիղ և թեք հոլովով դրված ձևերը:
- ✓ Քրդերենի անձնական դերանունների համեմատությունն

իրանական այլ լեզուների անձնական դերանունների համակարգի հետ:

Առաջարկվող գրականությունը՝

1. Бакаев Ч. Х., *Язык азербайджанских курдов*, Москва-Ленинград, 1965.
2. Бакаев Ч. Х., *Язык курдов СССР*, Москва, 1973.
3. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957.
4. Asadpour H., Louragi-Pour J., Qalati M. S., *Sorani Kurdish address forms: Case of Northwest Iran*, International Journal of Linguistics, № 4(4), 2012, pp. 421–449.
5. Justi F., *Kurdische Grammatik*, Petersburg 1880.
6. McCarus E. N., *A Kurdish Grammar*, New York, 1958.
7. Soane E. B., *Grammar of the Kurmanji or Kurdish Language*, London, 1913.
8. Thackston W. M., *Kurmanji Kurdish: A Reference Grammar with Selected Readings*, unpublished manuscript: electronic version retrieved from:

http://www.fas.harvard.edu/ ~iranian/Kurmanji/kurmanji_1_ grammar. Pdf (accessed: 20.02.2015).
9. Thackston W. M., *Sorani Kurdish: A Reference Grammar with Selected Readings*, unpublished manuscript: electronic version retrieved from: http://www.fas.harvard.edu/\~iranian/ Sorani/sorani_1_grammar. Pdf (accessed: 20.02.2015).

Թեմա 5

- Թվական անուն:
- ✓ Քանակական, դասական, կոտորակային թվականները:
- ✓ Քրդերենում կիրառվող շաբաթվա օրերի անվանումները, ժամանակ ցույց տվող բառերն ու արտահայտությունները, ամսանունները. դրանց ծագումնաբանական և համեմատական քննությունը:

Առաջարկվող գրականությունը՝

1. Бакаев Ч. Х., *Язык азербайджанских курдов*, Москва-Ленинград, 1965.
2. Бакаев Ч. Х., *Язык курдов СССР*, Москва, 1973.
3. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957.
4. Justi F., *Kurdische Grammatik*, Petersburg 1880.
5. McCarus E. N., *A Kurdish Grammar*, New York, 1958.
6. Thackston W. M., *Kurmanji Kurdish: A Reference Grammar with Selected Readings*, unpublished manuscript: electronic version retrieved from: http://www.fas.harvard.edu/ ~iranian/Kurmanji/kurmanji_1_ grammar. Pdf (accessed: 20.02.2015).

Թեմա 6

- Քրդերենի բայ հանգույցը, օժանդակ բայը, դիմային վերջավորությունները:
- ✓ Բայ հանգույցի և օժանդակ բայի կիրառությունը:

✓ Դիմային վերջավորությունների տեսակները քրդերենում և դրանց կիրառությունը տարբեր ժամանակաձևերում:

Առաջարկվող գրականությունը՝

1. Бакаев Ч. Х., *Язык курдов СССР*, Москва, 1973.
2. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957.
3. Aygen G., *Kurmanji Kurdish Grammar*, Munchen, 2007.
4. Usso B. Barnas, *Lehrbuch der kurdischen Sprache*, Wien, 1994.
5. Wurzel P., *Einführung in die kurdische Sprache*, Wiesbaden, 1997.

Թեմա 7

- Գոյականի սեռը:

✓ Արական, իգական և ընդհանուր սեռերը քրդերենում:

✓ Գոյականի սեռի վերացման միտումը ժամանակակից քրդերի լեզվում:

Առաջարկվող գրականությունը՝

1. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957.
2. Смирнова И. А., Эйюби К. Р., *Историко-диалектологическая грамматика курдского языка*, Москва, 1999.
3. Хетагуров Л. А., *Категория рода в иранских языках*, Уч. Записки ЛГУ, Серия филологических наук, вып. 1., № 20, Ленинград, 1939.
4. Шамилов А. Ш., Цукерман А. И., Курдоев К. К., *О проблеме рода в курдском языке,* Письменность и революция, сб. 1, Москва-Ленинград, 1933.
5. Asadpour H., Louragi-Pour J., Qalati M. S., *Sorani Kurdish address forms: Case of Northwest Iran*, International Journal of Linguistics, № 4(4), 2012, pp. 421–449.

Թեմա 8

- Իզաֆեթը քրդերենում:

✓ Իզաֆեթի կազմության յուրահատկությունները արական, իգական ու չեզոք սեռի գոյականների դեպքում:

✓ Իզաֆեթի կիրառությունը և դրա պարզեցման միտումը ժամանակակից քրդերի լեզվում:

Առաջարկվող գրականությունը՝

1. Бакаев Ч. Х., *Язык курдов СССР*, Москва, 1973.
2. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957.
3. Хамоян М. У., *Курдско-русский фразеологический словарь*, Ереван, 1979.
4. Шамилов А. Ш., Цукерман А. И., Курдоев К. К., *Об изафете в курдском языке*, Революция и письменность. № 1 (16), Москва, 1933, сс. 160-178.
5. Franco L., Manzini R., Savoia L., *Some call it article, some ezafe: "Linkers" as "agreement"*, 2013, Retrieved from http://www.academia.edu /4393956/Some _call_it_article_some_ezafe_ Linkers_as_agreement (accessed: 22 January, 2014).
6. Karimi Y, *Kurdish Ezafe constructions: Implications for DP structure*, Lingua, № 117, 2007, pp. 2159-2177.
7. Thackston W. M., *Kurmanji Kurdish: A Reference Grammar with Selected Readings*, unpublished manuscript: electronic version retrieved from: http://www.fas.harvard.edu/ ~iranian/Kurmanji/kurmanji_1_ grammar. Pdf (accessed: 20.02.2015).
8. Thackston W. M., *Sorani Kurdish: A Reference Grammar with Selected Readings*, unpublished manuscript: electronic version retrieved from: http://www.fas.harvard.edu/\~iranian/ Sorani/sorani_1_grammar. Pdf (accessed: 20.02.2015).

Թեմա 9

- Գոյականի որոշյալի և անորոշի առման քերականական կարգը:

✓ Գոյականի անորոշ առումը կազմելու ձևերն ու դրանց կիրառությունը:

✓ Գոյականի որոշյալ առումը, որն արտահայտվում է առավելապես ցուցական և որոշյալ դերանունների միջոցով:

Առաջարկվող գրականությունը՝

1. Бакаев Ч. Х., *Язык курдов СССР*, Москва, 1973.
2. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957.
3. Курдоев К. К., *О значениях и функциях суффикса -к (-ака) в курдском языке*, Исследования по истории культуры народов Востока: Сб. в честь акад. И. А. Орбели, Москва-Ленинград, 1960, сс. 361–366.
4. Thackston W. M., *Kurmanji Kurdish: A Reference Grammar with Selected Readings,* unpublished manuscript: electronic version retrieved from: http://www.fas.harvard.edu/ ~iranian/Kurmanji/kurmanji_1_ grammar. Pdf (accessed: 20.02.2015).
5. Thackston W. M., *Sorani Kurdish: A Reference Grammar with Selected Readings*, unpublished manuscript: electronic version retrieved from: http://www.fas.harvard.edu/\~iranian/ Sorani/sorani_1_grammar. Pdf (accessed: 20.02.2015).
6. K'örդo Q., *Граматика зьмане кӧрди (сэр зараве кӧрманщи)*, Ереван, 1956.

Թեմա 10

- Բայը քրդերենում:

✓ Անորոշ դերբայը քրդերենում:

✓ Բայի կառուցվածքային առանձնահատկությունները. պարզ, նախածանցավոր և բաղադրյալ բայեր:

Առաջարկվող գրականությունը՝

1. Авалиани Ю. Ю., *Материалы по сложному глаголу курдского языка*, Самарканд, 1962.
2. Авалиани Ю. Ю., *Особые парные глагольные сочетания в курдском языке*, Самарканд, 1959.
3. Бакаев Ч. Х., *Язык курдов СССР*, Москва, 1973.
4. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957.
5. Курдоев К. К., *О двух принципах образования сложных слов подчинительного типа в курдском языке*, Краткие сообщения института Востоковедения АН СССР, вып. 29. Москва, 1959, сс. 65-74.
6. Цукерман И. И., *Очерки курдской грамматики: Глагольные формы курманджи*, Москва-Ленинград, 1962.

Թեմա 11

- Անցողական և անանցողական բայեր:

✓ Անցողական և անանցողական բայերի խոնարհման առանձնահատկությունները:

✓ Էրգատիվ կառույցը քրդերենում:

Առաջարկվող գրականությունը՝

1. Курдоев К. К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957.
2. Курдоев К. К., *Объектное и субъектное спряжение переходного глагола в курдском языке: На материале диалектов курманджи и сорани*, Москва, 1960 (Доклады делегации СССР на XXV Международном конгрессе востоковедов).
3. Цукерман И. И., *Очерки курдской грамматики: Глагольные формы курманджи*, Москва-Ленинград, 1962.
